



L. ՏՈԼՍՏՈՅ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1 9 3 8

„ԲՈԼՇԵՎԻԿ“ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ



2011-05

ՅԳՄ.ԴԻՄ. ✓
5-80

Լ. Ն. ՏՈԼՍՏՈՅ

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Նկարներ նկարիչ Վ. ՎԱՏՍԴԻՆԻ

Թարգ. Ո. ԶՈՀՐԱԲՅԱՆԻ

ՌՈՍՏՈՎԻ ՄԱՐԶԻ ՀԱՅԿԱԿԱՆ
„ԲՈԼՇԵՎԻԿ“ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ՌՈՍՏՈՎ-ԴՈՆ, 1938

БИБЛИОТЕКА
Академии Наук
УРСР

BO 27964



8639-51

ԲՈՒԼԿԱ



Յես մի՞հաստամուլ շուն ունեյի: Նրա անունը Բուլկա յեր: Նա ամբողջովին սև եր, միայն առջևի թաթերի ծայրերն եյին սպիտակ:

Բոլոր հաստամուլ շների ներքևի ծնոտը վերևից յերկար ե լինում և ներքևի ատամները վերևի ատամներից առաջ են ընկած լինում: Բայց Բուլկայի ներքևի ծնոտն այն- ընդհան եր առաջ ընկած, վոր վերևի ու ներ- քևի ատամների միջև մի մատ կարելի յեր տեղավորել: Բուլկայի դեմքը լայն եր, աչ- քերը մեծ, սև ու փայլուն, նրա սպիտակ ատամներն ու ժանիքները միշտ դուրս եյին ցցված: Նա խափշիկի յեր նման: Բուլկան հանգիստ շուն եր և չեր կծում, բայց նա շատ ուժեղ եր ու կպչուն: Յերբ նա յերթեմ

կպչում եր մի բանից, ատամները սեղմում ու չլի նման կախ եր ընկնում և նրան ել տղի պես վոչ մի կերպ պոկել չեր լինում:

Մի անգամ նրան արջի վրա բաց թողին, և նա արջի ախանջին կպչելով, տգրուկի նման կախ ընկավ: Արջը խփում եր նրան թաթերով, իրեն եր սեղ- մում, այս ու այն կողմն եր նետում, բայց չկարողանալով նրանից պրծնել, գլխոնձի յեր լինում, վորպեսզի տակոյն անի ու ջարդի Բուլկային, բայց Բուլկան այնքան մնաց արջի վրա, մինչև վոր սառը ջրով չբաժանեցին նրան:

Յես նրան վերցրի լակոտ ժամանակը և ինքս մեծացրի: Կովկաս գնալիս, յես չուզեցի նրան հետս տանել և կամացուկ փախս նրանից, կարգադրելով, վոր նրան փակի տակ պահեն: Առաջին կայարանում, յերբ յես ուզում եյի արդեն մյուս կողքը նստել, մեկ ել տեսա, մի սև ու փայլուն բան գլորվելով գալիս ե ճանապարհով: Դա Բուլկան եր իր պղնձե վզկապով:

Նա ամբողջ շնչով թռչում եր դեպի կայարանը: Նա մոտս ընկավ, ձեռ- քերս լիզեց ու ապա փովեց շվաքում, սայլի տակ: Լեզուն ձեռքի ափի չափ դուրս եր ընկել: Նա մեկ ներս եր քաշում: Եզուն՝ թուրք կուլ տալիս, մեկ նորից դուրս գցում ամբողջ ափի չափ: Նա շտապում եր, շունչը չեր բավականա- նում: Նրա կողերն ուղղակի ցատկոտում եյին: Նա կողքից կողք եր շուռ գալիս և պոչով գետինը թակում:

Հետո յես իմացա, վոր նա, կտորելով շրջանակը, դուրս ե թռել լուսա- մուտից և ուղիղ իմ հետքերով վազել ե ճանապարհով ու այդպես անցել քսան վերստ ամենաշուգ ժամանակը:

ԲՈՒԼԿԱՆ ՅԵՎ ՎԱՐԱՋԸ

Մի անգամ Կովկասում մենք վարազի վորսի գնացինք, ու Բուլկան ել յեկավ հետս: Հենց նոր եյին գամփռները վորսը տեղից հանել, Բուլկան թռավ նրանց ձայնին և անհետացավ անտառում: Դա նոյեմբեր ամսուսն էր, այդ ժամանակ վարազներն ու խոզերը շատ չաղ են լինում:

Կովկասում, վարազների ապրած անտառներում, շատ համեղ պտուղներ կան՝ վայրի խաղող, յեղենական, խնձոր, տանձ, մոշ, խոզակաղին, մամուխ: Յեվ յերբ բոլոր այդ պտուղները հասունանում են և միջից ցրտով դիպչում, վարազները բոլ-բոլ ուտում են ու չաղանում:

Այդ ժամանակ վարազն այնքան չաղ է լինում, վոր չի կարողանում յերկար փախչել շներից: Յեթե նրան մի յերկու ժամ հայածես, նա խրվում է անտառի թավուտներում ու կանգ առնում: Այդ ժամանակ վորսորդները մոտենում են ու կրակում նրա վրա: Շների հաջոցից կարելի չէ իմանալ՝ կանգ է առել վարազը, թե փախչում է: Յեթե նա փախչում է, այն ժամանակ շները հաչում են կաղկանձելով, կարծես թե նրանց ծեծում են, իսկ յեթե վարազը կանգ է առել, այն ժամանակ շները հաջում են ինչպես մարդու վրա ու վրոնում:

Այդ վորսի հետևից յես շատ վազվզեցի անտառում, բայց վոչ մի անգամ ինձ չեր հաջողվում վարազի ճանապարհը կտրել: Վերջապես յես լսեցի գամփռների յերկարածիգ հաջոցն ու վրոնոցը և վազեցի դեպի այն կողմը: Յես արդեն շատ մոտ եյի վարազին: Թավուտից ճայթյուններ եյին հասնում ինձ: Դա վարազի կոխն էր շների հետ: Սակայն հաջոցից հայտնի յեր, վոր շները դեռևս չեն բռնել վարազին, այլ միայն շրջապատել են նրան: Հանկարծ լսեցի՝ հետևումս մի բան խշխշաց, տեսնեմ Բուլկան է: Նա, յերևի, անտառում կորցրել էր գամփռներին ու մոլորվել, իսկ այժմ լսել էր նրանց հաջոցը ու ինձ նման, վորքան ուժ ունեւր, սլանում էր դեպի այն կողմը: Նա վազում էր բացուտի բարձր խոտերի միջով, և յես տեսնում էյի միայն նրա սև գլուխն ու սպիտակ ատամները միջից դուրս ընկած լեզուն: Յես կանչեցի նրան, բայց նա հետ չնայեց. ինձնից առաջ անցավ ու անհետացավ թավուտների մեջ: Յես վազեցի նրա հետևից, բայց վորքան առաջ եյի գնում՝ այնքան անտառն ավելի յեր խտանում: Ծառերի ճյուղերը թռցնում էյին գլխարկըս, յերեսիս եյին խփում, մամխի փշերը շորիցս եյին կպչում: Յես արդեն բոլորովին մոտ եյի հաջոցին, բայց դեռ վոչինչ չեյի կարողանում տեսնել:

Հանկարծ լսեցի, վոր շներն ավելի ամուր սկսեցին հաչել. ինչ վոր բան ճայթեց, և վարազն սկսեց հեվալ ու խոխալ: Յես այնպես ել կարծեցի, վոր Բուլկան այժմ հասել է վարազին ու նրա հետ կռվի յե բռնվել: Յես վերջին ուժերովս վազեցի թավուտի միջով այն տեղը: Թավուտի ամենախուլ տեղում տեսա խայտաբղետ գամփռին: Նա տեղում կանգնած հաչում էր և վրոնում, իսկ նրանից յերեք քայլ հեռու մի բան շարժվում ու սևին էր տալիս:

Յերբ ավելի մոտեցա, յես նշմարեցի վարազին և լսեցի ինչպես Բուլկան սուր ձայնով կաղկանձեց: Վարազը ճչաց և գամփռի վրա հարձակվեց. Դամփռը պոչը քաշեց ու հետ թռավ: Թփերի մեջ յերեաց վարազի կողքն ու գլուխը: Յես նշան առա նրա կողքին և կրակեցի: Տեսա, վոր դիպավ: Վարազը հառաչեց և, ճյուղերը կտրատելով, փախավ թավուտի միջով: Շները, կաղկանձելով ու հաչելով, գնացին նրա հետքով, յես թավուտի միջով վազեցի

նրանց հետևից: Հանկարծ, համարյա վրոններիս տակ ինչ-վոր մի բան տեսա ու լսեցի: Դա Բուլկան էր: Նա կողքի վրա ընկած՝ կաղկանձում էր: Նրա տակ արյան լճակ էր գոյացել: Կարծեցի, թե շունս կորած է արդեն, բայց այժմ նա չեր իմ հոգսը, յես առաջ վազեցի: Շուտով տեսա վարազին: Շները հարձակվում, բռնում եյին նրան հետևից, իսկ նա մեկ այս, մեկ այն կողմն էր շուռ գալիս: Յերբ վարազն ինձ տեսավ, վրա պրծավ: Յես կրկին, համարյա կիպ դեմ առած, կրակեցի, այնպես վոր վարազի մազերը խանձվեցին, և նա խոխոաց, որորվեց և մարմնի ամբողջ ծանրությամբ շրմփաց գետնին:


Յերբ յես մոտեցա, վարազն արդեն անկենդան էր, և միայն մարմնի այս ու այն մասերն եյին փռվում ու ցնցվում: Բայց շները, մազերը բիզ-բիզ կանգնած, վրոնեց փորն ու վրոնեց եյին քաշկուտում, վրոնեց ել վերքից հոսող արյունն եյին լակում:

Այստեղ Բուլկան միտս ընկավ, և յես գնացի նրան վորոնելու: Նա սողալով դեպի ինձ էր գալիս ու տքարում: Մոտեցա նրան, նստեցի մոտը և գնեցի վերքը: Նրա փորն էր պատվել, և աղիքների մի ամբողջ կծիկ, փորից դուրս ընկած, քարշ էր գալիս չոր տերևների վրայով: Յերբ ընկերներս մոտ յեկան, մենք տեղը դրինք նրա աղիքները և փորը կարեցինք: Յերբ կաշին ծակծկելով կարում եյինք նրա փորը, նա շարունակ իմ ձեռներն էր լիզում:

Վարազին անտառից դուրս հանելու համար կապեցինք ձիու պոչին, իսկ Բուլկային դրինք ձիու վրա և այդպես տուն բերինք նրան: Բուլկան մոտ վեց շաբաթ հիվանդ մնալուց հետո առողջացավ:

ՖԱՍՅԱՆՆԵՐ

Կովկասում վայրենի հավերին Փասյան են անվանում: Նրանցից այնքան շատ կա այնտեղ, վոր ընտանի հավից ել եժան են: Փասյաններին վորսում են վահանների, դարան մտնելու և շների ոգնությամբ: Ահա թե ինչպես են վորսում վահաններով. վերցնում են կտավի մի կտոր և քաշում շրջանակի վրա, վորի մեջտեղում ձող են ամրացնում, իսկ կտավի մեջ մի անցք են անում: Այս կտավածածկ շրջանակը կոչվում է վահան: Այս վահանով և հրացանով արշալուսին գնում են անտառ: Վահանն առաջ բռնած՝ անցքի միջով



Ֆասյան են փնտռում: Առափոտ լուսաբացին Ֆասյանները կերակրվում են անտառի բացուտներում: Յերբեմն պատահում է, թուխսն իր ձագերով միասին, յերբեմն աքաղաղը հավի հետ, և յերբեմն ել մի քանի աքաղաղ միասին:

Փասյանները մարդկանց չտեսնելով, կտավից չեն վախենում և թույլ են տալիս իրենց մոտենալու: Այն ժամանակ վորսորդը վայր և դնում վահանը, հրացանը կտավի անցքով դուրս ե հանում և կրակում ուզած Ֆասյանի վրա:

Դարան մտած, ահա այսպես են վորսում. հասարակ մի շուն բաց են թողնում անտառ ու նրա հետևից գնում: Հենց վոր շունը Ֆասյան ե գտնում, հարձակվում ե նրա վրա: Փասյանը ծառն ե թռչում, իսկ շունն սկսում ե նրա վրա հաչել: Վորսորդը հաջոցի ձայնին գալով՝ կրակում ե ծառին նստած Ֆասյանի վրա: Այս ձևով վորսալը հեշտ կլինել, յեթե Ֆասյանը նստեր բաց տեղում գտնվող ծառի վրա և այնպես նստեր, վոր յերևար: Բայց նրանք միշտ նստում են սաղարթախիտ ծառերի վրա անտառի խիտ տեղերում և, հենց վոր նկատում են վորսորդին, իսկույն թագնվում են ճյուղերի մեջ: Ու շատ դժվար ե լինում թավոտի միջով Ֆասյանի նստած ծառին մոտենալ ու նկատել նրան: Յերբ շունը մենակ ե հաջում, Ֆասյանը չի վախենում նրանից ու դեռ բարկանում ել ե նրա վրա և թեմերով թափահարում: Բայց հենց վոր տեսնում ե մարդուն, իսկույն և յեթ ձգվում ե ճյուղերի մեջ, այնպես վոր միայն այս բանին սովոր վորսորդը կարող ե նրան նկատել, իսկ անսովորը նրա մոտն ել կանգնի, վոչինչ չի տեսնի:

Յերբ կազակները գաղտագողի մոտենում են Ֆասյաններին, փափախները քաշում են յերեսներին ու վերե չեն նայում, վորովհետև Ֆասյանը վախենում ե հրացանավոր մարդուց, մանավանդ նրա աչքերից:

Շներով ահա թե ինչպես են վորսում. վորսկան շանը տանում են անտառ ու այնտեղ նրա հետևից ման գալիս: Շունը հոտառությամբ իմանում ե, թե լուսաբացին Ֆասյանները վորտեղով են անցել կերակուր փնտռելու, ու սկսում ե նրանց հետքերը գնել: Յեվ, ինչքան ել Ֆասյանները խճճած լինեն հետքերը, լավ շունը միշտ կգտնի այն վերջին հետքը, վորը ցույց ե տալիս, թե վոր կողմն են գնացել Ֆասյանները կերակրվելուց հետո: Վորքան հեռու յե գնում շունը հետքով, այնքան ավելի ուժեղ ե զգում վորսի հոտը ու այսպիսով հասնում ե այն տեղը, ուր ցերեկով նստած ե լինում կամ ման ե գալիս Ֆասյանը արոտների մեջ: Յերբ շունը մոտենում ե, այնպես ե թվում նրան, թե Ֆասյանը հենց այստեղ ե, ուղիղ նրա առջևում, ու ավելի զգույշ ե առաջ շարժվում, վոր չվախեցնի նրան, և կանգ ե առնում, վորպեսզի միանգամից ցատկի ու բռնի նրան: Յերբ շունն արդեն բոլորովին մոտենում ե, Ֆասյանը թռչում ե տեղից, և վորսորդը կրակում ե:

ՄԻՆՏՈՆՆ ՈՒ ԲՈՒԼԿԱՆ


Փասյաններ վորսալու համար յես ձեռք բերեցի վորսկան շուն, վորին Միլտոն եյին կոչում: Նա բարձրահասակ, նիհար, բծավոր գորշագույն, յերկար ջրթուռներով ու ականջներով մի շուն եր և շատ ել ուժեղ ու խելացի: Բուլկայի հետ նա չեր կրծոտվում: Վոչ մի շուն Բուլկայի հետ յերբեք չեր կրծոտվում: Բավական եր միայն, վոր նա իր ատամները ցույց տար, շները պոչերը

սեղմած հեռանում եյին: Մի անգամ յես Միլտոնին հետս առած գնացի Ֆասյան վորսալու: Հանկարծ Բուլկան վազ տվեց հետևիցս դեպի անտառ: Ուզում եյի նրան քննել, բայց վոչ մի կերպ չկարողացա: Իսկ տունս հեռու յեր, և ինքս չեյի կարող տուն տանել նրան: Յես մտածեցի, վոր նա ինձ չի խանգարի, և շարունակեցի ճանապարհս: Բայց հենց նոր եր Միլտոնն արոտների մեջ Ֆասյանի հոտն առել ու սկսել եր փնտրել, Բուլկան առաջ նետվեց և սկսեց ամեն կողմ քիթը խոթել: Նա աշխատում եր Միլտոնից առաջ թռցնել Ֆասյանին: Արոտների միջից նա լսեց՝ ինչ-վոր մի բան թռչկոտում ու թռվռում եր, բայց, վատ հոտառություն ունենալով, չեր կարողանում մենակ հետքը գտնել, այլ նայում եր Միլտոնին և վազում այն կողմը, ուր Միլտոնն եր գնում: Հենց վոր Միլտոնը բռնում եր վորսի հետքը, Բուլկան իսկույն առաջ եր վազում: Յես հետ եյի կանչում Բուլկային, ծեծում եյի, բայց վոչինչ չեր ոգնում: Հենց վոր Միլտոնն սկսում եր փնտրել, նա առաջ եր նետվում և խանգարում նրան: Յես արդեն ուզում եյի տուն գնալ, մտածելով, վոր վորսս խանգարվել ե, սակայն Միլտոնն ինձնից լավ հնար գտավ Բուլկային խաբելու: Ահա թե ինչ արավ. հենց վոր Բուլկան նրանից առաջ եր անցնում, Միլտոնը հետքը թողնում, ուրիշ կողմ եր դառնում ու ձևացնում, վոր իբր թե փնտռում ե: Բուլկան այն կողմն եր նետվում, վորը Միլտոնն եր ցույց տվել, իսկ Միլտոնն՝ աչքերը դեպի ինձ դարձնելով, թափ եր տալիս պոչը ու նորից գնում իսկական հետքով: Բուլկան նորից վազում եր դեպի Միլտոնը, առաջ անցնում նրանից: Միլտոնն ել դարձյալ դիտմամբ տասը քայլի չափ մի կողմ եր գնում, Բուլկային խաբում ու ինձ նորից տանում եր ուղիղ հետքով: Այնպես վոր վորսի ամբողջ ժամանակ Միլտոնը, Բուլկային խաբելով, թույլ չտվեց նրան գործը խանգարելու:

Կ Ր Ի Ա

Մի անգամ յես Միլտոնի հետ վորսի գնացի: Անտառի մոտ նա, պոչը կախ գցած, ականջները ցցեց և սկսեց հոտոտել ու փնտռել: Հրացանս պատրաստեցի ու գնացի նրա հետևից: Յես կարծեցի, թե նա կաքավ, Ֆասյան կամ նապաստակ ե փնտռում: Բայց Միլտոնն անտառ չմտավ, այլ դաշտ գնաց: Յես գնում եյի նրա հետևից և նայում եյի դեպի առաջ: Հանկարծ տեսա այն, ինչ նա յեր փնտռում: Նրա առջևից վոչ այնքան մեծ, գլխարկի չափ մի կրիա յեր փախչում: Մերկ, մութ մոխրագույն գլուխը յերկար վզով դուրս եր հանել սանդիտոտների կոթի նման: Կրիան իր մերկ թաթերով խոշոր քայլեր եր անում, իսկ նրա մեջքն ամբողջովին կեղևով եր ծածկված: Յերբ նա տեսավ շանը, վոտներն ու գլուխը պահեց և խոտերի մեջ թաղվեց, այնպես վոր յերևում եր միայն նրա կեղևը: Միլտոնը բռնեց նրան ու սկսեց կծոտել, բայց չկարողացավ նրան կծել, վորովհետև կրիայի փորի վրա կար նույնպիսի կեղև, ինչպես և նրա մեջքի վրա: Միայն առջևից, հետևից ու կողքերից ունի անցքեր, վորոնցից դուրս ե հանում նա իր գլուխը, վոտներն ու պոչը:

Յես խլեցի Միլտոնից կրիան ու գնեցի՝ ինչպես ե նախշված նրա մեջքը, ինչպես ե կեղևը և ինչպես ե թագնվում նա այնտեղ: Յերբ ձեռքումդ բռնած նայում ես նրա կեղևի տակը, այն ժամանակ միայն տեսնում ես ներսում,



կարծես նկուղամ, մի սև ու կենդանի բան: Յես կրիային ցած գցեցի խոտի վրա և առաջ գնացի, բայց Միլտոնը չեր ուզում նրան թողնել ատամներով բռնած բերում եր իր հետևից: Հանկարծ Միլտոնը կաղկանձեց ու բաց թողեց նրան: Կրիան դուրս եր հանել իր թաթը և ճանկոել եր նրա բերանը: Դրա համար նա այնպես բարկացավ նրա վրա, վսր սկսեց հաշել և

նորից վերցրեց նրան ու բերեց իմ հետևից: Յես դարձյալ հրամայեցի ցած գցել, բայց Միլտոնն ինձ չեր լսում: Այն ժամանակ խլեցի նրանից կրիան ու դեն գցեցի: Բայց նա չթողեց նրան: Նա արագությամբ սկսեց թաթերով նրա մոտ փոս փորել: Ու յերբ փոսը փորեց վերջացրեց, թաթերով գլորեց կրիային փոսի մեջ և թաղեց հողում:

Կրիաներն, իժերի և գորտերի նման, ապրում են թե գետնի վրա և թե ջրում: Նրանց ձագերը ձվից են դուրս գալիս: Ձվերն ածում են գետնի վրա, թուխս չեն նստում, այլ ձվերն իրենք, ինչպես ձկնկիթը, ձաքվում են, և ձագերն են դուրս գալիս: Լինում են փոքր՝ բաժակակալից վոչ մեծ, կրիաներ, ինչպես և խոշոր՝ յերեք արշին մեծությամբ ու քսան փութ ծանրությամբ կրիաներ: Խոշոր կրիաները ծովերուֆ են ապրում: Մեկ կրիան գարնան ընթացքում հարյուրավոր ձվեր ե ածում: Կրիայի կեղևը՝ այդ նրա կողերն են: Միայն թե մարդկանց և մյուս կենդանիների կողերը բաժանված են լինում իրարից, իսկ կրիայինը՝ միաձուլվել, կեղև են դարձել: Բայց գլխավորն այն ե, վոր բոլոր կենդանիների կողերը ներսում, մսի տակն են, իսկ կրիաների կողերը վրայից են, և միսը նրանց տակն ե:


ԲՈՒԼԿԱՆ ՅԵՎ ԳԱՅԼԸ

Յերբ յես հեռանում եյի Կովկասից, այնտեղ դեռ պատերազմը շարունակվում եր և գիշերն առանց պահակի դուրս գալը վտանգավոր եր:

Յես ուզում եյի առավոտը, վորքան կարելի յե վաղ, ճանապահ ընկնել, ուստի և չպառկեցի քնելու: Բարեկամս յեկավ ինձ ճանապահս դնելու, ու մենք ամբողջ յերեկոն և գիշերը նստել եյինք ստանիցայի փողոցում իմ տան առաջ: Մառախլապատ լուսնյակ գիշեր եր, և այնքան լույս, վոր կարելի յեր կարգալ, թեև լուսինը չեր յերևում:

Կես գիշերին հանկարծ լսեցինք, վոր փողոցի մյուս կողմում, գիմացի բակում ճղճղում ե խոճկորը: Մեզնից մեկը բացականչեց. «դա գայլ ե, խեղդում ե խոճկորին»: Յես տուն վազեցի, վերցրի լցրած հրացանս և փողոց դուրս յեկա: Բոլորը կանգնած եյին այն բակի դարպասի մոտ, վորտեղ ճղճղում եր խոճկորը, և ինձ եյին կանչում, «Այս կողմ արի»: Միլտոնը վազեց իմ հետևից. յերևի, կարծեց՝ թե վորսի յեմ գնում հրացանով: Իսկ Բուլկան՝ իբ կարճ ականջները սրած, դես ու դեն եր նետվում, կարծես հարցնում եր, թե վորի ոճիքից կհրամայեն, վոր նա կպչի:

Յերբ յես վազեցի դեպի ցանկապատը, տեսա, վոր մի դազան բակի կող



մից ուղիղ՝ դեպի ինձ ե վազում: Դա գայլ եր: Նա վազելով դեպի ցանկապատը՝ թռավ նրա վրա: Յես հեռաջվեցի և պատրաստեցի հրացանս: Հենց վոր գայլը ցանկապատի վրայից իմ կողմը ցատկեց, յես համարյա դեմ առ դեմ նշան բռնեցի և ձիգն արձակեցի: Բայց հրացանը միայն «չրրխկ» արավ ու չկրակեց: Գայլը կանգ չառավ և վազեց փողոցի միջով: Միլտոնն ու Բուլկան ընկան նրա հետևից: Միլտոնը մոտենում եր գայլին, բայց, յերևի, վախենում եր նրան բռնել, իսկ Բուլկան, ինչքան ել արագ եր վազում իր կարճ վոտներով, չեր կարողանում հասնել: Մենք, վորքան ուժ ունեյինք, վազում եյինք գայլի հետևից, բայց գայլն ել, շներն ել կորան մեր աչքից: Մտանիցայի ծայրում միայն, փոսի մոտերքում, լսեցինք հաջոցի և կաղկանձոցի ձայն ու լուսնկա գիշերվա մշուշի միջով տեսանք, թե ինչպես փոշի բարձրացավ, և ինչպես շները գայլի հետ են կռվում: Յերբ մենք, վազելով հասանք փոսին, գայլն արդեն չկար, և յերկու շունն ել վերադարձան դեպի մեզ՝ պոչերը տնկած և չարացած դեմքով: Բուլկան մռնչում և գլխով հրում եր ինձ. նա, յերևի, ուզում եր մի բան պատմել, բայց չեր կարողանում:

Մենք շներին զննելով տեսանք, վոր Բուլկայի գլխի վրա մի փոքրիկ վերք կար: Նա, յերևի, գայլի հետևից հասել եր փոսի մոտ, բայց չեր կարողացել նրան բռնել, ու գայլը նրան կծոտելով փախել եր: Վերքը՝ մեծ չեր, այնպես վոր վոչ մի վտանգ չկար:

Մենք վերադարձանք տուն և նստել խոսում եյինք այս դեպքի մասին: Յես նեղանում եյի, վոր հրացանս չկրակեց, և շարունակ մտածում եյի, թե ինչպես գայլը տեղն ու տեղը գետին կգլորվեր, յեթե հրացանս փուստ չտար:

Բարեկամս զարմանում եր, թե գայլն ինչպես կարող եր բակը մտնել: Ծերունի մի կազակ ասում եր, վոր զարմանալի վոչինչ չկա, վոր դա գայլ չեր, այլ մի վհուկ, վորը կախարդել եր իմ հրացանը: Այսպես մենք նստած խոսում եյինք: Հանկարծ շները հարձակվեցին, և մենք մեր առաջ փողոցի մեջ տեղում դարձյալ տեսանք նույն գայլին, բայց այս անգամ մեր ձայնից այնքան շուտ փախավ, վոր շներն ել չհասան նրան: Դրանից հետո ծերունի կազակն արդեն բոլորովին համոզվեց, վոր դա վոչ թե գայլ եր, այլ վհուկ: Իսկ յես մտածում եյի՝ արդյոք դա կատաղած գայլ չեր, վորովհետև յերբեք չեյի տեսել ու լսել, վոր գայլը մի անգամ հալածվելուց հետո, նորից վերադառնա մարդկանց մոտ:

Համենայն դեպս Բուլկայի վերքի վրա վառող ցանցի ու կրակ տվի։ Վառողը բռնկվեց ու այրեց վերավորված տեղը։

Յես վառողով վերքն այրեցի նրա համար, վոր փոխհացնեյի կատաղու-
թյան թուրք, յեթե միայն նա դեռ չեր անցել արյան մեջ։ Իսկ յես գիտեյի,
վոր յեթե թուրքն ընկել ու մտել ե արդեն արյան մեջ, ապա արյան միջոցով
նա կտարածվի ամբողջ մարմնի մեջ, ու այն ժամանակ ել չի կարեյի բժշկել։

ԻՆՉ ՊԱՏԱՋԵՑ ԲՈՒԼԿԱՅԻ ՀԵՏ ՊՅԱՏԻԳՈՐԱԿՈՒՄ

Ստանիցայից յես ուղղակի Ռուսաստան չգնացի, այլ նախ՝ Պյատիգորսկ-
այստեղ մնացի յերկու ամիս։ Միլտոնին նվիրեցի մի կազակ վորսորդի, իսկ
Բուլկային հետս վերցրի Պյատիգորսկ։

Պյատիգորսկն այսպես ե կոչվում նրա համար, վոր նա գտնվում ե Բեշ-
թաու լեռան վրա։ Իսկ բեշ թուրքերեն նշանակում ե հինգ, թաու՝ սար։ Այս
սարից հոսում ե ծծմբային տաք ջուր։ Զուրն ախքան տաք ե, վոր կարծես
յեռացրած լինի. այստեղ, վորտեղ հոսում ե ջուրը սարից, միշտ գոլորշի
յե կանգնած, ինչպես ինքնայեռի վրա։ Ամբողջ այն տարածությունը, վորը
քաղաքն ե բռնել, շատ գեղեցիկ ե։ Լեռներից հոսում են տաք աղբյուրներ,
լեռան տակով հոսում ե Պոտկումով գետը։ Լեռան վրա՝ անտառ, շուրջը՝ դաշ-
տեր, իսկ հեռվում միշտ յերևում են կովկասյան մեծ լեռները։ Այս լեռների
վրա ձյունը յերբեք չի հալվում և նրանք միշտ շաքարի նման սպիտակ են։
Պարզ լեղանակին մենակ մեծ Ելբրուս լեռն ե, վոր շաքարի սպիտակ գլխի
նման յերևում ե ամեն տեղից։ Մարդիկ գալիս են այս տաք աղբյուրներով
բժշկվելու։ Աղբյուրների վրա շինված են տաղավարներ, ծածկեր, շուրջը —
պարտեզներ ու շավիղներ։ Առավոտները նվազում ե յերաժշտությունը, մար-
դիկ ջուր են խմում, լողանում և զբոսնում են։

Իսկական քաղաքը սարի վրա յե, իսկ սարի ստորոտում մի գյուղ կա,
վորտեղ մի փոքրիկ տան մեջ ապրում եյի յես։ Տնակը գտնվում եր բակում.
պատուհանների առաջ կար մի փոքրիկ այգի, վորտեղ գտնվում եյին տան-
տիրոջ մեղվափեթակները վոչ թե կոճերում, ինչպես Ռուսաստանումն ե, այլ
հյուսած կլոր փեթակներում։ Մեղուններն այստեղ ախքան հանգիստ եյին,
վոր յես առավոտները Բուլկայի հետ միշտ նստում եյի այգում փեթակների
միջև։ Բուլկան ման եր գալիս փեթակների միջև, զարմանում եր մեղուններից,
հոտոտում եր, ականջ եր դնում, թե ինչպես են բզզում նրանք, բայց այն-
քան զգուշությամբ եր ման գալիս մեղունների կողքին, վոր չեր խանգարում
նրանց, ու նրանք ել նրան չեյին դիպչում։

Մի անգամ առավոտյան յես աղբյուրներից վերադարձա և այգում նստեցի
սուրճ խմելու։ Բուլկան սկսեց քորել ականջների հետևը և վզկապով զնգաց-
նել։ Աղմուկը մեղուններին անհանգստացրեց, ու յես հանեցի Բուլկայի վզ-
կապը։ Միքիչ հետո քաղաքից՝ սարի կողմից լսեցի տարորինակ ու սարսա-
փելի մի աղմուկ։ Շները հաջում եյին, վորոնում, կաղկանձում, մարդիկ գոռ-
գոռում եյին, և աղմուկը սարից իջնելով ավելի ու ավելի մոտենում եր մեր
գյուղին։ Բուլկան դադարեց քորվելուց, իր սպիտակ ատամներով լայն գլուխը
դրեց առջևի սպիտակ թաթիկների մեջտեղը, լեզուն ներս քաշեց, ինչպես
հարկավոր եր իրեն, ու հանդարտ պառկել եր իմ կողքին։ Յերբ նա լսեց աղ-

մուկը, կարծես հասկացավ բանն ինչումն ե, ականջները սրեց, ատամները
ցույց տվեց, տեղից վեր թռավ ու սկսեց վոռնալ։ Աղմուկը մոտենում եր։
Կարծես ամբողջ քաղաքի շներն եյին վոռնում, կաղկանձում ու հաջում։ Յես
դուրս յեկա դարպասից նայելու. իմ տանտիրուհին ել նույնպես մոտեցավ։
Յես հարցրի. «Այդ ի՞նչ բան ե»։ Նա ասաց. — Դրանք բանտի կալանավորներն
են, ման են գալիս ու շներին սպանում։ Շները շատացել են և քաղաքային
վարչությունը հրամայել ե քաղաքի բոլոր շներին կոտորել։

— Ինչպե՞ս, Բուլկային ել կսպանեն, յեթե ձեռներն ընկնի։

— Վոչ, վզկապ ունեցողներին թույլ չեն տալիս սպանելու։

Հենց նույն պահին, յերբ յես խոսում եյի, կալանավորներն արդեն մո-
տեցան մեր բակին։

Առջևից գնում եյին զինվորները, հետևից ել չորս կալանավոր՝ շղթա-
յակիր։ Յերկու կալանավորների ձեռքին կային յերկաթե յերկար կեռեր, իսկ
մյուս յերկուսի ձեռքին՝ մահակներ։

Մեր դարպասի առաջ կալանավորներից մեկը կեռով բռնեց բակի մի
փոքրիկ շնիկ, քարշ տվեց նրան փողոցի մեջտեղը, իսկ մյուսն սկսեց ծեծել
նրան մահակով։ Շնիկը սարսափելի կաղկանձում եր, իսկ կալանավորներն ինչ
վոր բան եյին գոռում ու ծիծաղում։

Ձեռքին կեռ ունեցող կալանավորը շուռ տվեց շնիկին ու, յերբ տեսավ,
վոր սատկել ե, հանեց կեռը և սկսեց շուրջը նայել՝ արդյոք ել ուրիշ շուն չկա։

Այդ ժամանակ Բուլկան շեշտակի թափով, ինչպես վոր արջի վրա յեր
հարձակվում, նետվեց այդ կալանավորի վրա։ Յես հիշեցի, վոր նա առանց
վզկապի յեր, և ձայն տվի. «Բուլկա, հետ» և կալանավորների վրա յել գո-
ռացի, վոր Բուլկային չծեծեն։ Բայց կալանավորը Բուլկային տեսավ, քրքշաց
և կեռով ճարպիկությամբ խփեց ու բռնեց ազդրից։ Բուլկան ուզեց փախչել,
բայց կալանավորը դեպ իրեն քաշեց նրան և գոռաց մյուսին. «Խփիր»։ Սա
յել մահակը բարձրացրեց, վոր խփի։ Ու Բուլկան սպանված կլիներ, բայց
նա ուժ արավ, ազդրի կաշին պոկվեց, ու նա, պոչը քաշած, կարմիր վերքը
փոքրին, շեշտակի թափով բակը թռավ դռնից և կուչ յեկավ անկողնիս տակ։


Նա պրծավ նրանով, վոր կաշին ամբողջովին պատռվել եր այն տեղում,
վորտեղ կեռն եր խփել։

ԲՈՒԼԿԱՅԻ ՅԵՎ ՄԻԼՏՈՆԻ ՎԱԽՃԱՆԸ

Բուլկան և Միլտոնը միաժամանակ գտան իրենց վախճանը։ Մերունի
կազակը Միլտոնի հետ վարվելու ձևը չգիտեր։ Փոխանակ նրան իր հետ միայն
թռչուններ վորսալու համար վերցնելու, նա սկսել եր տանել նրան նաև վա-
րազներ վորսալու։ Յեվ հենց նույն աշնանը սուր ժանիքներով մի վարազ*
պատռեց նրա փորը։ Վոչվոք չկարողացավ վերքը կարել, և Միլտոնը սատկեց։

Կալանավորների ձեռքից ազատվելուց հետո Բուլկան ել յերկար չապրեց։
Նա շուտով սկսեց ձանձրութ զգալ և լիզել ամեն բան, ինչ վոր պատահում
եր։ Նա լիզում եր իմ ձեռները, բայց վոչ այնպես, ինչպես առաջ, յերբ քծն-
վում եր։ Նա լիզում եր յերկար, լեզուն ուժեղ սեղմում ձեռներին, իսկ հետո
սկսում եր ատամներով բռնել։ Յերևում եր, վոր կարիք եր զգում ձեռքս

* Բնագրում «секач», վոր նշանակում ե յերկու տարեկան, սուր և դեռ չծաված ժանիքներով
վարազ (ծ. Թ.)



քով հետ ե դառնում: Ելի մի բան ե լսում և ամբողջ ուժով մի ուրիշ կողմ ե ցատկում և նախկին հետքից հեռանում: Դարձյալ մի վորևե թրխկոց, և նապաստակը նորից հետ ե դառնում և ուրիշ կողմ վազում: Յերբ լուսանում ե, նա պառկում ե:


Առավոտը վորսորդներն սկսում են նապաստակի հետքերը քննել, կրկնակի հետքերից և խոշոր ցատկումներից շփոթություն մեջ են ընկնում ու զարմանում են նապաստակի խորամանկության վրա: Իսկ նապաստակը խորամանկությունն անելու միտք ել չի ունեցել: Նա միայն վախենում ե ամեն ինչից:

ՀՐԴԵՅԻ ԾՆԵՐԸ

Հաճախ պատահում ե, վոր քաղաքներում հրդեհ պառահած տանը յերեսաներ են մնում և հնարավոր չի լինում դուրս հանել նրանց, վորովհետև վախից նրանք թագնվում և լուռ են մնում, իսկ ծխի պատճառով նրանց չի կարելի տեսնել: Դրա համար Լոնդոնում շներին են վարժեցրել: Այս շները հրդեհաշեջների մոտ են ապրում, ու յերբ մի վորևե հրդեհ ե լինում, հրդեհաշեջները շներին են ուղարկում՝ յերեսաներին հրդեհի միջից դուրս բերելու համար: (Լոնդոնում*) մի այդպիսի շուն տասներկու յերեսա յե ազատել, նրա անունը Բոր եր:

Մի անգամ հրդեհվեց մի տուն: Յեվ յերբ հրդեհաշեջները յեկան այն տունը, մի կին վազեց նրանց ընդառաջ: Նա լալիս եր ու ասում, վոր տանը իր յերկու տարեկան աղջկն ե մնացել: Հրդեհաշեջներն ուղարկեցին Բորին: Բորը սանդուխքով վեր վազեց ու անհայտացավ ծխի մեջ: Հինգ րոպեից հետո տնից դուրս վազեց ու բերեց աղջկան՝ առաջներով շապիկից բռնած: Մայրը մոտ վազեց աղջկան և ուրախությունից լալիս եր՝ աղջկանը կենդանի տեսնելով: Հրդեհաշեջները փաղաքշում եյին շանը և գննում՝ արդյոք նրա վորևե

*) Լոնդոնը Անգլիայի մայրաքաղաքն ե:



տեղը չի այրվել, բայց Բոբը դարձյալ ուզում էր ներս վազել, Հրդեհաշիջ-
ները կարծեցին, թե տանն ելի ինչ-վոր կենդանի բան կա, ու բաց թողին
նրան: Շունը ներս վազեց ու շուտով դուրս յեկավ ատամներով մի բան բռնած:
Յերբ մարդիկ տեսան, թե նա ինչ է բերում, քրքջացին: Նա մի մեծ տիկնիկ
էր բերում:

ԿՍՏՎԻ ՁԱԳԸ.

Քույր ու յեղբայր եյին՝ Վասյան և Կատյան: Նրանք մի կատու ունեյին:
Փարնանը կատուն կորավ: Մանուկներն ամեն տեղ փնտռեցին, բայց չգտան:
Մի անգամ նրանք շտեմարանի մոտ խաղալիս լսեցին, վոր իրենց գլխավերևում
ինչ-վոր թույլ մլավոց է լսվում: Վասյան սանդուխքով բարձրացավ շտեմա-
րանի կտուրի տակ: Իսկ Կատյան ներքևում կանգնած անդադար հարցնում էր.
«գտմը, գտմը». բայց Վասյան չէր պատասխանում: Վերջապես Վասյան կան-
չեց. «գտա, մեր կատուն է...» նա ձագեր ունի և վորքան հրաշալի յեն նրանք.



շուտ այստեղ յեկ»: Կատյան տուն վազեց, կաթ վերցրեց ու բերեց կատվին:
Ձագուկները հինգ հատ եյին: Յերբ նրանք միքիչ մեծացան և սկսեցին դուրս
սողալ այն անկյունից, վորտեղ նրանք ծնվել եյին. յերեխաներն իրենց համար
ընտրեցին գորշագույն և սպիտակ թաթիկներով ձագին և տուն բերին: Մայրը
բաժանեց հարեանների մեջ մյուս բոլոր ձագերին, իսկ այս մեկին՝ թողեց յե-
րեխաների համար: Յերեխաները կերակրում եյին նրան, խաղում և իրենց մոտ
պառկեցնում նրան:

Մի անգամ յերեխաները ճանապարհի վրա խաղալու գնացին և իրենց
հետ վերցրին կատվի ձագին:

Քամին շարժում էր ճանապարհի վրա թափված ծղոտը, իսկ կատվի ձագը
խաղում էր ծղոտի հետ. յերեխաներն էլ նրա վրա նայում, ուրախանում եյին:
Հետո նրանք ճանապարհի մոտ թրթնջուկ գտան և գնացին քաղելու, իսկ կատվի
ձագին մոռացան:

Հանկարծ նրանք լսեցին, վոր մեկը բարձրաձայն կանչում է. «հետ, հետ»,
ու տեսան, վոր մի վորսորդ է արշավում, իսկ առջևից նրա յերկու շունը
վորոնք տեսնելով կատվի ձագին, ուզում եյին բռնել նրան: Իսկ կատվի ձագը.

հիմարը, փոխանակ փախչելու, տափ արավ գետնին, մեջքը ուռցրեց և նայեց
շներին:


Կատյան վախեցավ շներին, ճղղաց, փախավ. Վասյան, ինչքան ուժ ունեւր,
վազեց և շների հետ միաժամանակ մոտեցավ ձագին: Շներն ուզում եյին բռնել
կատվի ձագին, բայց Վասյան ընկավ նրա վրա և պաշտպանեց շներին:

Վորսորդը վրա հասավ ու հեռացրեց շներին, իսկ Վասյան տուն բերեց
կատվի ձագին և էլ նրան իր հետ դաշտ չէր տանում:

ԱՐԾԻՎԸ.

Արծիվն իր բույնը շինել էր մեծ ճանապարհի մոտ, ծովից հեռու, և ձա-
գեր հանել:

Մի անգամ ծառի մոտ մարդիկ եյին աշխատում, իսկ արծիվը, ճանկե-
րով մի մեծ ձուկ բռնած, թռավ դեպի իր բույնը: Մարդիկ տեսան ձուկը,
շրջապատեցին ծառը, սկսեցին աղաղակել ու արծիվ վրա քարեր նետել:
Արծիվը ձուկը բաց թողեց, մարդիկ վերցրին ու գնացին:



Արծիվը նստեց ընի ծայրին, իսկ ձագերն իրենց գլուխը բարձրացրին ու
սկսեցին ծվծվալ. նրանք կեր եյին խնդրում:

Արծիվը հոգնել էր և նորից դեպի ծովը թռչել չէր կարող: Նա մտավ
բույնը, թևերով ծածկեց ձագերին, փաղաքեց նրանց, փետուրներն ուղղեց
և, կարծես, խնդրում էր, վոր միքիչ սպասեն: Բայց վորքան ավելի յեր փա-
ղաքում, այնքան նրանք շատ եյին ծվծվում:

Այն ժամանակ արծիվը հեռացավ նրանցից, նստեց ծառի վերևի ճյուղին:
Արծիվի ձագերն ավելի ևս խղճալի սկսեցին շվացնել ու ծվծվալ:




Այն ժամանակ արծիփն ինքն ել հանկարծ բարձր կանչեց, թևերն ուղղեց ու ծանրաշարժ թռավ դեպի ծովը: Նա վերադարձավ միայն ուշ յերեկոյան: Թռչում եր ծանր ու գետնից վոչ բարձր. նրա ճանկերում դարձյալ մի մեծ ձուկ կար:

Յերբ մոտեցավ ծառին, նա շուրջը նայեց, վոր տեսնի՝ արդյոք մոտերքում ելի մարդիկ չկան. արագությամբ ծալեց թևերն ու նստեց բնի յեզրին:

Արծիփ ձագերը գլուխները բարձրացրին և բերանները բաց արին, իսկ արծիվը պատառոտեց ձուկն ու ձագերին կերակրեց:

ՃՆՃՂՈՒԿՆ ՈՒ ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ

Մի անգամ յես բուկում կանգնած նայում եյի կտրի տակ գտնվող ծիծեռնակների բնին: Յերկու ծիծեռնակն ել իմ աչքի առաջ թռան, և բուկնը դատարկ մնաց:



Նրանց բացակայության ժամանակ կտրից մի ճնճղուկ թռավ—նստեց բնին, նայեց շուրջը, թևերը թափահարեց ու ծլկվեց բուկնը, հետո այնտեղից դուրս հանեց իր գլխիկն ու սկսեց ճուփողել:

Դրանից հետո շուտով յեկավ ծիծեռնակը: Նա մտավ բուկնը, բայց հենց վոր տեսավ հյուրին, սկսեց ծվծվալ, թևերը թափ տալ ու թռավ:

Ճնճղուկը նստել ու ճուփողում եր:

Հանկարծ մոտ թռավ ծիծեռնակների մի յերամբ: Բոլոր ծիծեռնակները մոտեցան բնին, կարծես ճնճղուկին տեսնելու, ու նորից թռան, հեռացան:

Ճնճղուկը չեւ վախենում, գլուխն եր շրջում ու ճուփողում:

Ծիծեռնակները նորից մոտեցան բնին, ինչ-վոր բան արին ու ելի հեռացան:

Չուր չե, վոր ծիծեռնակները մոտենում եյին.—նրանցից ամեն մեկը կոցով ցեխ եր բերում և քիչ-քիչ ծեփում բնի մուտքը:

Ծիծեռնակները նորից հեռանում ու գալիս եյին և շարունակ ավելի ու ավելի եյին ծեփում բուկնը, և մուտքը քանի գնում, այնքան նեղանում եր:

Սկզբում յերևում եր ճնճղուկի վիզը, հետո արդեն՝ միայն գլուխը, հետո քիթը, իսկ հետո բոլորովին վոչինչ չեւ յերևում: Ծիծեռնակները նրան ամբողջովին փակեցին բնում, թռան և ծվծվալով սկսեցին ճախրել տան շուրջը:

ԱՌՅՈՒԾՆ ՈՒ ՇՆԻԿԸ

Հոնդոնում վայրենի գազաններ եյին ցույց տալիս ու նրանց տեսնելու համար կամ փող, կամ շներ ու կատուներ վերցնում՝ գազաններին կերակրելու համար:

Մի մարդ ուզեց տեսնել գազաններին. նա փողոցում բռնեց մի շնիկ և բերեց գազանանոց: Նրան ներս թողին դիտելու, իսկ շնիկին վերցրին, առյուծի վանդակը գցեցին, վոր առյուծն առաւ:

Շնիկը պոչը կախ գցեց ու վանդակի մի անկյունում կուչ յեկավ: Առյուծը մոտեցավ նրան ու հոտոտեց:

Շնիկը պառկեց մեջքի վրա, թաթիկները բարձրացրեց ու սկսեց պոչը շարժել: Առյուծը թաթով հրեց ու շուռ տվեց նրան: Շնիկը վեր թռավ ու առյուծի առաջ կանգնեց հետևի թաթիկների վրա:

Առյուծը նայում եր շնիկին, գլուխն այս ու այն կողմն եր դարձնում, բայց նրան ձեռք չեւ տալիս:

Յերբ տերը միս գցեց առյուծին, վերջինս մի կտոր պոկեց ու թողեց շնիկին:

Յերեկոյան, յերբ առյուծը պառկեց քնելու, շնիկն ել պառկեց նրա կողքին ու գլուխը դրեց նրա թաթին:

Այդ ժամանակվանից շնիկն ապրում եր առյուծի հետ մի վանդակում: Առյուծը նրան չեւ դիպչում, ուտում եր իր կերը, քնում եր շնիկի հետ միասին, յերբեմն խաղում նրա հետ:

Մի անգամ մի պարոն յեկավ գազանանոց և ճանաչեց իր շնիկին: Նա ասաց, վոր այդ իր սեփական շունն ե, և խնդրեց գազանանոցի տիրոջից, վոր շնիկին իրեն հետ տան: Տերն ուզում եր տալ, բայց հենց վոր սկսեցին շնիկին կանչել, վոր վանդակից դուրս հանեն, առյուծը բարկացավ ու մոռնչաց:



Այսպես առյուծն ու շնիկն ամբողջ տարին մի վանդակում ապրեցին:

Մի տարուց հետո շնիկը հիվանդացավ ու սատկեց: Առյուծը դադարեց բան ուտելուց և անդադրում հոտոտում, լիզում եր շնիկին ու թաթով շարժում:

Յերբ հասկացավ, վոր շնիկը սատկել ե, հանկարծ տեղից վեր թռավ, մագերը ցցեց, սկսեց պոչով իր կողքերը ծեծել, հարձակվեց վանդակի պատի վրա ու սկսեց փախչել և հատակը կրծոտել:

Ամբողջ որը նա պատեպատ եր զարկվում, վանդակում դես-դեն անում ու մոնչում: Հետո պառկեց սատկած շնիկի մոտ ու հանդարտվեց: Տերն ուզում եր սատկած շնիկին տանել վանդակից, բայց առյուծը վոչ մեկին նրան մոտիկ չեր թողնում:

Տերը կարծում եր, վոր առյուծը կմոռանա իր վիշտը, յեթե նրան մի ուրիշ շուն տա. նա վանդակը գցեց մի կենդանի շուն: Բայց առյուծը նրան իսկույն պատառ-պատառ արավ: Հետո թաթերով գրկեց մեռած շնիկին ու այդպես պառկեց հինգ օր:

Վեցերորդ օրն առյուծը մահացավ:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ԳԱՅԼԵՐՆ ԻՐԵՆՑ ԶԱԳԵՐԻՆ

Յես գնում եյի ճանապարհով. հետևիցս մի ձայն լսեցի. գոռացողը մի հովիվ տղա յեր: Նա դաշտում վազում եր և ցույց եր տալիս ինչ-վոր մեկին: Յես նայեցի ու տեսա, վոր դաշտում յերկու գայլ են փախչում, մեկը մեծ, մյուսը ջահել: Զահել գայլն իր մեջքի վրա տանում եր պատառոտած մի գառնուկ, իսկ ատամներով բռնել եր նրա վտաքից:

Մեծ գայլը վազում եր նրա հետքով:

Յերբ տեսա գայլերին, յես ել հովվի հետ վազեցի նրանց հետևից. մենք սկսեցինք գոռգոռալ: Մեր աղմուկից վրա վազեցին գյուղացիները՝ շների հետ:

Ծեր գայլը, հենց վոր տեսավ շներին ու մարդկանց, վազեց, մոտեցավ ջահելին, խլեց նրանից գառը, դրեց իր մեջքին, և յերկու գայլերն ել արագ փախան ու անհետացան:

Այն ժամանակ տղան սկսեց պատմել յեղելությունը. մեծ գայլը ձորից դուրս եր վազել, հափշտակել եր գառնուկին, պատառոտել նրան ու տարել:

Հետո նրան ընդառաջ եր վազել ջահել գայլը և հարձակվել գառնուկի վրա: Ծերը ջահել գայլին եր տվել գառնուկին տանելու, իսկ ինքը թեթևակի վազում եր նրա կողքից:


Բայց յերբ վտանգը վրա հասավ, ծերը դատարեց փոքրին սովորեցնելը և ինքը վերցրեց գառնուկին:

ՇՆԱՁՈՒԿԸ

Մեր նավը խարխիս ե ձգել Աֆրիկայի ափին: Որը հրաշալի յեր, ծովից փչում եր զով ջամի, բայց յերեկոյան դեմ յեղանակը փոխվեց. ողը խելդուկ եր. Սահարա անապատի տաք ողը, կարծես, վառած վառարանից եր փչում մեզ վրա:

Արևը մայր մտնելուց առաջ նավապետը դուրս յեկավ տախտակամածը, գոչեց. «լողանալ», ու մի բոպեյում նավաստիները ջուրը ցատկոտեցին, առագաստը ջուրն իջեցրին, կապեցին նավին և առագաստում լողարան սարքեցին:

Նավի վրա մեզ հետ յերկու տղա կար: Տղաներն առաջինը ցատկեցին ջուրը, բայց առագաստը նեղ եր նրանց համար. նրանց խելքին փչեց բաց ծովում լողամրցում սարքեր: Յերկուսն ել մողեսների նման ձգվում եյին ջրի մեջ, և վորքան ուժ ունեյին, լողացին դեպի այն կողմը, վորտեղ խարխիս վրա



տակառն եր գտնվում: Տղաներից մեկն սկզբում ընկերոջից առաջ անցավ, բայց հետո սկսեց հետ մնալ: Տղայի հայրը, վոր ծերունի մի թնդանոթածիգ եր, տախտակամածի վրա կանգնած հրճվում եր իր զավակին նայելով: Յերբ տղան սկսեց հետ մնալ, հայրը կանչեց նրան. «Ամոթով մի մնա, գոռ տուր: Հանկարծ մեկը տախտակամածից կանչեց՝ «Հնաձուկը», և մենք բոլորս ջրում տեսանք ծովային հրեշի մեջքը: Շնաձուկը լողում եր ուղիղ դեպի տղաները: «Հետ, դեպի հետ դարձեք, շնաձուկը», — սկսեց գոռալ թնդանոթածիգը: Բայց տղաները նրան չեյին լսում, լողում եյին դեպի առաջ և առաջվանից ավելի ուրախ ու բարձր ծիծաղում և աղմկում եյին:

Թնդանոթածիգը, կտավի նման գունատ, անշարժ նայում եր յերեխաների վրա:

Նավաստիներն իջեցրին նավակը, թափվեցին նրա մեջ ու, վորքան ուժ ունեյին, թիավարեցին դեպի տղաները: Բայց նավաստիները դեռ հեռու եյին նրանցից, յերբ շնաձուկն արդեն քսան քայլից ավելի հեռու չեր:

Տղաներն սկզբում չեյին լսում, թե ինչ եյին գոռում նրանց և շնաձկան չեյին տեսնում: Բայց հետո նրանցից մեկը հետ նայեց, ու մենք բոլորս լսեցինք մի սուր ճիչ ու յերեխաները լողացին զանազան կողմեր:

Այս ճիչը կարծես սթափեցրեց թնդանոթածիգին: Նա թռավ տեղից ու վազեց դեպի թնդանոթները: Նա շուռ տվեց կնճիթը, հենվեց թնդանոթին, նշան բռնեց ու վերցրեց պատույզը:

Նավի վրա ինչքան մարդ կար, ամենքը լեղապատառ սպասում եյին, թե ինչ կլինի:

Հավեց տրաքոցը, և մենք տեսանք, վոր թնդանոթածիգն ընկավ թնդանոթի մոտ և ձեռներով յերեսը ծածկեց: Թե ինչ պատահեց շնաձկան և տղայի հետ, մենք չտեսանք, վորովհետև ծխից մի ըրպե ծածկվեցին մեր աչքերը:

Բայց յերբ ծուխը ցնդեց ջրի վրա, ամեն կողմից լավեց խուլ տրտունջ, հետո այդ տրտունջն սկսեց ավելի սաստկանալ, ու վերջապես ամեն կողմերից բարձր և ուրախ մի ճիչ լավեց:

Ծերունի թնդանոթածիգը դեմքը բաց արավ, վեր կացավ տեղից և նայեց ծովին:

Ալիքները վրա ուրբվում եր մեռած շնաձկի դեղին փորը: Միքանի ըրպեյից նավակը հասավ տղաներին և բերեց նրանց նավը:

ՎՈՍՏՅՈՒՆ

Մի նավ, աշխարհի շուրջը պտտելուց հետո, տուն եր վերադառնում: Հանդարտ յեղանակ եր, բոլոր մարդիկ տախտակամածի վրա եյին: Մարդկանց միջին եր շրջում մի մեծ կապիկ և բոլորին զվարճացնում եր: Այդ կապիկը կուչ եր գալիս, ցատկոտում, ծիծաղելի ծամածուլություններ անում, մարդկանց տնազ եր տալիս, և յերևում եր, վոր նա գիտեր, թե նրանով զվարճանում են և դրա համար ել ավելի ևս յերես եր առնում:

Նա մոտ ցատկեց նավապետի տասներկու տարեկան վորդուն, վերցրեց նրա գլխից գլխարկը, դրեց իր գլխին և արագ բարձրացավ կայմի վրա: Բոլորը ծիծաղեցին, իսկ յերեխան, առանց գլխարկի մնալով, ինքն ել չգիտեր, ծիծաղի, թե բարկանա:

Կապիկը նստեց կայմի առաջին շեղափայտի վրա, գլխարկը հանեց ու

սկսեց ատամներով ու թաթերով պատառոտել այն: Նա կարծես տնազ եր տալիս յերեխային, ցույց եր տալիս նրա վրա և ծամածուլություններ անում: Յերեխան սպառնաց նրան ու կանչեց նրա վրա, բայց կապիկն ավելի կատաղորեն եր պատառոտում գլխարկը: Նավաստիներն սկսեցին ավելի բարձր ծիծաղել, իսկ յերեխան կարմրեց, դեն ձգեց վրայից բաճկոնակը և կապիկի հետևից բարձրացավ կայմը: Մի ըրպեյից նա պարանով բարձրացավ կայմի առաջին շեղափայտին, բայց հենց այն ըրպեյին, յերբ նա ուզում եր խլել գլխարկը, կապիկը նրանից ավելի ճարպիկ և արագ վերև բարձրացավ:

— Դու իմ ձեռքից չես պրծնի — բացականչեց յերեխան և ավելի վեր բարձրացավ: Կապիկը նորից խաբեց նրան, ել ավելի վեր բարձրացավ, իսկ յերեխան արդեն զայրացած հետ չեր մնում նրանից: Այսպես կապիկն ու յերեխան մի ըրպեյում հասան ամենավերին մասը:

Այստեղ կապիկը ձգվեց ամբողջ մարմնով, հետևի ձեռքով բռնեց պարանից, գլխարկը կախեց վերի շեղափայտի ծայրին, իսկ ինքը բարձրացավ կայմի կատարը և այնտեղից ծամածուլություններ եր անում, ատամները ցույց տալիս և ուրախանում: Կայմից մինչև շեղափայտի ծայրը, վոր տեղից կախված եր գլխարկը, յերկու արշին եր, այնպես վոր գլխարկին հասնել չեր կարելի առանց պարանն ու կայմը ձեռքից բաց թողնելու:

Բայց յերեխան խիստ բարկացավ: Նա թողեց կայմը և վոտը դրեց շեղափայտի վրա: Տախտակամածի վրա բոլորը նայում և ծիծաղում

եյին կապիկի ու նավապետի վորդու արածների վրա: Բայց հենց վոր տեսան, թե յերեխան պարանը ձեռքից բաց թողեց ու վոտը դրեց շեղափայտի վրա՝ ձեռներն այս ու այն կողմ ճոճելով, յերկյուղից քարացան ամենքը:

Բավական եր միայն, վոր վոտը ծուռ կոխեր ու նա կընկներ տախտակամածի վրա և ջարդ ու փշուր կլիներ: Մինչև անգամ, յեթե վոտն ել ծուռ չդներ և մինչև շեղափայտի ծայրը հասներ ու վերցներ գլխարկը, ելի դժվար պիտի լիներ նրան շուռ գալ և մինչև կայմը հետ դառնալ: Բոլորը լուռ նայում եյին նրան և սպասում, թե ինչ ե լինելու:



Հանկարծ բազմութեան մեջ մեկը վախից ախ քաշեց: Յերեխան այդ բա-
ցականչութիւնից սթափվեց, նայեց ներքի և որորվեց:

Այդ ժամանակ նախապետը, յերեխայի հայրը, նախասենյակից դուրս յե-
կավ: Նա բռնել եր հրաչան՝ վորորներ վորսալու համար: Նա տեսավ վորդուն
կայմի վրա, իսկույն վորդուն նշան բռնեց ու գոչեց. «Ղուրն ընկիր, իսկույն
Ղուրը ցատկիր, թե չե կկրակեմ... մեկ, յերկու...» և հենց վոր հայրը գոռաց
«յերեք», յերեխան գլուխը ներքե ծռեց ու թռավ: Յերեխայի մարմինը թըն-
դանոթի արկի նման շրմփաց ծովում և, ալիքները դեռ չեյին ծածկել նրան,
յերբ քսան հոգի կտրիճ նախաստիններ ծովը նետվեցին: Քառասուն վայրկյա-
նից հետո—բոլորի համար շատ յերկար թվացին այդ վայրկյանները—յերե-
խայի մարմինը ջրից դուրս յեկավ: Նրան բռնեցին և նավը բերին: Միքանի
րոպեից հետո նրա քթից ու բերանից Ղուրը դուրս թափվեց, ու նա սկսեց
շունչ քաշել:

Յերբ նախապետն այս տեսավ, հանկարծ գոռաց, կարծես նրան մի բան
խեղդում եր, և վազեց իր սենյակը, վորպեսզի վոչվոք չտեսնի իր լացը:

ՎՈՐՍՈՐԴԻ ՊԱՏՄԱԾԸ

Մենք գնացել եյինք արջ վորսալու: Ընկերոջս վիճակվեց կրակել արջի
վրա. նա վիրավորեց նրան, բայց փափուկ տեղից: Ձյան վրա միքիչ արյուն
մնաց, իսկ արջը հեռացավ գնաց:

Մենք իրար հանդիպեցինք անտառում և սկսեցինք խորհել, թե ինչ տ-
նենք, գնանք արդյոք արջին փնտռելու, թե՞ յերեք որ սպասենք, մինչև վոր
արջը պառկի:

Սկսեցինք արջ վորսող գլուղացիներին հարց ու փորձ անել, թե հիմա կա-
րելի՞նք յե արդյոք այդ արջի հետևից հասնել, թե՞ վոչ: Մերունի արջավորսն
ասաց. «չի կարելի, պետք ե արջին ժամանակ տալ, վոր հանդարտվի: Մի
հինգ որից հետո կարելի յե նրան փնտռել, իսկ հիմա վոր նրա հետևից գնաս—
միայն պիտի վախեցնես նրան, նա չի ել պառկի:

Իսկ մի յերիտասարդ արջավորս գլուղացի վիճում եր ծերունու հետ և
ասում, թե այժմ կարելի յե հետապնդել: «Այսպիսի ձյան վրայով, ասում ե՞
արջը հեռու չի գնա, նա չաղ ե: Հենց այսոր ել կպառկի: Իսկ յեթե չպառկի,
յես նրա հետևից դահուկներով կհասնեմ»:

Ընկերս ել նույնպես չեր ուզում այժմ հետապնդել և խորհուրդ եր տա-
լիս սպասել:

Յես ել ասում եմ. «ինչ վիճելու բան կա: Դուք արեք այնպես, ինչպես
կամենում եք, իսկ յես Դեմյանի հետ արջի հետքը կբռնեմ: Կգտնենք՝ լավ,
չենք գտնի՝ միևնույնն ե այսոր անելիք չունենք և ուշ ել չե»:

Այդպես ել արինք:

Ընկերներս գնացին դեպի սահնակը և գլուղ մեկնեցին, իսկ մենք Դեմյա-
նի հետ հետներս հաց վերցրինք ու մնացինք անտառում:

Հենց վոր բոլորը գնացին, մենք Դեմյանի հետ գնացինք հրացաններս,
մուշտակներս փեշերը վեր քաշեցինք ու գնացինք արջի հետքով:

Յեղանակը լավ եր՝ ցուրտ ու հանդարտ: Բայց դահուկներով գնալը դժ-
վար եր, ձյունը խորն եր ու փխրուն:

Անտառում ձյունը դեռ չեր նստել, բացի դրանից նախորդ որն ել ձյուն
եր յեկել, այնպես վոր դահուկները քառորդ մասով և տեղ-տեղ ել ավելի
թաղվում եյին նրա մեջ:

Արջի հետքը հեռվից եր յերևում: Յերևում եր, թե ինչպես եր գնացել
արջը, թե ինչպես տեղ-տեղ մինչև փորը թաղվել եր ու շուռ տվել ձյունը:
Մենք սկզբում գնում եյինք խիտ անտառի միջով, առանց հետքը կորցնելու,
իսկ հետո, յերբ հետքը գնում եր նոսր յեղնուտով, Դեմյանը կանգ առավ:

«Պետք ե,—ասում ե,—հետքը թողնել: Յերևի այստեղ կպառկի: Սկսել ե
նստոտել, այդ նկատելի յե ձյան վրա: Արի, հեռանանք հետքից, շրջանք ա-
նենք, միայն թե պետք ե կամացուկ գնալ առանց գոռալու և հազալու, թե
չե կվախենա»:

Մենք հետքից շեղվեցինք դեպի ձախ: Հինգ հարյուր քայլի չափ անց-
նելուց հետո՝ տեսնենք արջի հետքը դարձյալ մեր առաջն ե:

Մենք նորից գնացինք հետքով, այդ հետքը տարավ մեզ դեպի ճանապարհը:
Այդ ճանապարհին կանգ առանք ու սկսեցինք դիտել, թե վո՞ր կողմն եր գնացել արջը:

Ճանապարհի վրա տեղ-տեղ նկատվում եր արջի ամբողջ թաթը, նաև
մատների հետքը, տեղ-տեղ ել գլուղացու տրեխների հետքը: Յերևում եր, վոր
դեպի գլուղն եր գնացել: Գնացինք ճանապարհով: Դեմյանն ասում ե, «այժմ
կարիք չկա ճանապարհը դիտելու, թե վորտեղ նա ճանապարհից աջ կամ ձախ
ե շեղվել, կերևա ձյան վրա»:

Մի տեղ ճանապարհը ծռած կլինի, հո գլուղ չպիտի գնա: Այսպես ճա-
նապարհով գնացինք մոտ մի վերստ: Տեսնենք առջևում հետքը ծովել ե ճա-
նապարհից: Նայեցինք՝ այ քեզ հրաշք—արջի հետքն ե. այն ել վոչ թե ճա-
նապարհից դեպի անտառ, այլ անտառից դեպի ճանապարհ՝ մատները ճա-
նապարհի կողմը դարձրած: «Մա ուրիշ արջ ե»,—ասում եմ յես: Դեմյանը նա-
յեց ու միտք արեց. «վոչ,—ասում ե,—դա հենց ինքն ե, միայն թե սկսել ե
խաբել: Նա ճանապարհից քամակը առաջ գցած ե դուրս: յեկել»:

Գնացինք հետ-
քով—ճիշտ վոր այդ պես եր: Յերևում եր, վոր արջը ճանապարհից մոտ տասը
քայլ քամակը առաջ գցած եր գնացել, անցել եր սոճին, շուռ յեկել և ուղիղ
գնացել: Դեմյանը կանգ առավ ու ասում ե. «այժմ, հավանորեն, կգտնենք:
Բացի այս ճահճից նա ուրիշ պառկելու տեղ չունի: Գնանք առաջն առնենք»:

Խիտ յեղնուտի միջով գնացինք արջի առաջն առնելու: Յես ար-
դեն հոգնել եյի, դահուկներով գնալն ել սկսել եր դժվարանալ: Մերթ գի-
հու թփին ես հանդիպում ու դահուկներով կառչում, մերթ վոտներիդ մեջ
յեղնին ե ընկնում, մերթ դահուկն ե շուռ գալիս անսովոր լինելուց, մերթ
սահում ու դիպչում ես ձյան տակ մնացած կոճղին ու քոթուկին: Յես ար-
դեն սկսում եյի հոգնել: Մուշտակս հանեցի, քրտինքս ջրի պես վազում եր:
Իսկ Դեմյանը կարծես նավակով եր լողում: Նրա դահուկները կարծես իրենք
են գնում: Վոչ մի բանի չեն կպչում, շուռ չի գալիս: Մուշտակս ել իր շա-
լակն ե գցել, ինձ ել անդադար շտապեցնում ե:

Մոտ յերեք վերստ շրջան արինք, ճահճի մյուս կողմն անցանք: Յես
արդեն սկսեցի հետ մնալ—դահուկներս շուռ են գալիս, վոտներս խձձվում են:
Դեմյանը, վոր ինձնից առջև եր, հանկարծ կանգ առավ ու ձեռքով ե անում
ինձ: Յես մոտեցա: Դեմյանը կռանում ե դեպի ինձ, փսփսում ե ու ցույց
տալիս. «տեսնում ես—կաշաղակը կչկչում ե ջարդված ծառի վրա: Նա հեռ-
վից առնում ե արջի հոտը: Այդ նա յե»:

Ու գնացինք դարձյալ, մոտ մի վերստ ճանապարհ ելի անցանք ու նորից գտանք հին հետքեր: Այնպես վոր, մենք, արջի շուրջը կտրելով, նրան մեջտեղը թողինք: Մենք կանգ առանք: Յես գլխարկս ել հանեցի ու բոլոր կոճակներս ել քակեցի, շոգ եր, կարծես բաղնիսում լինեյի, և մարմինս մկան պես թաց եր: Դեմյանն ել, կաս-կարմիր, թևով քրտինքն ե սրբում: «Դեհ, ասում ե,—աղա ջան, գործը կատարեցինք, հիմի հանգստանալ ե պետք: Արդեն անտառի միջից կարմրին ե տալիս վերջալուսը: Նստեցինք դահուկների վրա հանգստանալու: Պարկից հաց և աղ հանեցինք. յես առաջ ձյուն կերա, իսկ հետո՝ հաց: Ու այնքան համեղ թվաց ինձ հացը, վոր կյանքումս այդպիսին չեյի կերել: Մենք մնացինք նստած, որն ել արդեն սկսեց մթնել: Յես Դեմյանին հարցրի, հեռու յե արդյոք գյուղը. «Մի տասներկու վերստ կլինի: Գիշերը կհասնենք, իսկ հիմի հանգստանալ ե պետք: Մուշտակը հագիր, աղա, թե չե կմրսես»:

Դեմյանը յեղևնու ճյուղեր կտրատեց, ձյունը փորփրեց, մահճակալ սարքեց, ու մենք պառկեցինք կողք-կողքի ու ձեռներս ել գլխներիս տակ դրինք: Ինքս ել չեմ հիշում, թե ինչպես եմ քնել: Մոտ յերկու ժամից հետո արթնացա: Ինչ վոր ճրճեց լսվեց:

Յես այնքան խորն եյի քնել, վոր չեյի հիշում, վորտեղ եմ քնել: Նայում եմ շուրջս, այ քեզ հրաշք: Վորտեղ եմ յես: Վերևս ինչ-վոր սպիտակ ապարանքներ ու սպիտակ սյուներ, ու ամեն ինչ պսպղում ե: Նայում եմ վերև—սպիտակ նախշեր, իսկ նախշերի արանքներում ինչ-վոր մութ կամար ե յերևում, և գույնզգույն ճրագներ են վառվում: Նայեցի չորս կողմս ու հիշեցի, վոր անտառումն ենք և վոր այդ ձյունով ու յեղյամով ծածկված ծառերն են յեղել, վորոնք ինձ թվացել ելին ապարանքներ, իսկ ճրագները՝ յերկնքի աստղերն ելին, վորոնք ճյուղերի միջից առկայծում ելին:

Գիշերը յեղյամ նստեց: Յեղյամ ճյուղերի վրա, յեղյամ մուշտակիս վրա, Դեմյանն ել վտից գլուխ յեղյամով պատած, վերևից ել յեղյամը թափվում ու թափվում ե: Զարթեցրի Դեմյանին: Դահուկներս կապեցինք վտաններիս և գնացինք:

Անտառում լուռ ե: Լսվում ե միայն, թե ինչպես մենք դահուկներով խրվում ենք փափուկ ձյան մեջ կամ ինչպես այստեղ ու այնտեղ ծառն ե սառնամանիքից ձայնաթմբում, ու ամբողջ անտառում խուլ թնդյուն տարածվում: Միայն մի անգամ մոտիկում մի կենդանի բան աղմկեց ու փախավ: Յես հենց կարծեցի, թե արջն ե: Մոտեցանք այն տեղին, վորտեղից ձայնն եր լսվել, տեսնում ենք նապաստակի հետքեր: Թարմ բարդիներն ել կրծուված են: Նապաստակներն ելին կրծել:

Դուրս յեկանք ճանապարհը, դահուկները կապեցինք մեջքներիցս ու գնացինք ճամբով:

Գնալն հեշտացավ: Դահուկները մեր հետևից հարթ ճանապարհով սահում են ու աղմկում, ձյունը կոշիկներիս տակին զրթզրթում ե, սառ յեղյամն աղվամազի նման կաշում ե յերեսներիս: Իսկ աստղերը ճյուղերի միջով կարծես ընդառաջ են վազում: Նրանք ճառագայթում են ու հանգչում, կարծես ամբողջ յերկինքը շարժման մեջ ե:

Ընկերս քնած եր. յես զարթեցրի նրան: Մենք տանտիրոջը պատմեցինք, թե ինչպես գտանք արջի տեղը և կարգադրեցինք, վոր առավոտյան դեմ հավաքի վորսկան պուղացիներին: Ընթրեցինք ու պառկեցինք քնելու:

Հոգնած լինելով մինչև ճաշ կքնեյի, յեթե ընկերս չզարթեցներ ինձ: Վերթա, տեսնեմ՝ ընկերս արդեն հագնվել ե և հրացանն ե սարքում:

— Իսկ վորտեղ ե Դեմյանը:

— Նա վաղուց արդեն անտառումն ե: Նա արդեն ստուգել ե, վոր արջը չըջանից դուրս չի յեկել, նորից յեկել ե տուն ու հիմի յել տարել ե վորսկաններին, վոր վրա տան:

Յես լվացվեցի, հագնվեցի, հրացանս լցրի, նստեցինք սահնակն ու գնացինք:

Սաստիկ սառնամանիքը դեռ շարունակվում եր. շուրջը խաղաղ եր, արևն ել չեր յերևում. մառախուղ եր պատել վերևում, ու յեղյամ եր իջնում: Մոտ յերեք վերստ ճանապարհով գնալուց հետո, մոտեցանք անտառին: Տեսնենք՝ ներքևում ծուխն ե կապույտին տալիս ու մարդիկ են կանգնած — գյուղացիներ ու գեղջկուհիներ—մահակները ձեռներին:

Սահնակից իջանք և մոտեցանք մարդկանց: Գյուղացիները նստել, կարտոֆիլ են տապակում, գեղջկուհիների հետ ծիծաղում:

Դեմյանն ել նրանց հետն ե: Մարդիկ վեր կացան: Դեմյանը տարավ նրանց յերեկվա մեր շրջած տեղում դասավորելու: Գյուղացիներն ու գեղջկուհիները — յերեսուն հոգի — թելի պես ձգվեցին — նրանք յերևում ելին մինչև գոտիները. մտան անտառ, հետո յես ու ընկերս գնացինք նրանց հետքով: Ծանապարհը թեև տափած ե, բայց գնալը դժվար ե, սակայն վայր ընկնելու տեղ ել չկա, վորովհետև գնում ես, կարծես, յերկու պատերի միջով:

Այսպես անցանք մոտ կես վերստ, մեկ ել տեսնենք՝ Դեմյանը արդեն մյուս կողմից դահուկներով դեպի մեզ ե վազում, ձեռքով անում, վոր գնանք նրա մոտ:

Մոտեցանք նրան, նա ցույց տվեց մեզ մեր տեղերը: Յես կանգնեցի տեղս, շուրջս նայեցի:


Իմ ձախ կողմում բարձր յեղևնուտ կար, նրա միջով յերևում ե հեռուն, իսկ ծառերի հետևում սևին ե տալիս վորսկան գյուղացին: Դիմացս խիտ մատղաշ յեղևնուտ կար մոտավորապես մարդու հասակի բարձրությամբ: Ու յեղևնուտում ճյուղերը կախ են ընկել և ձյունով իրար կպել: Յեղևնուտի մեջտեղում արահետը ծածկվել ե ձյունով: Այդ արահետն ուղիղ դեպի ինձ ե գալիս: Այ կողմս կար խիտ յեղևնուտ, իսկ սրա ծայրին ել մի բացուտ: Տեսնում եմ՝ հենց այդ բացուտի վրա յել Դեմյանը կանգնեցրեց ընկերոջս:

Նայեցի յերկու հրացաններս, հրահանները բարձրացրի և սկսեցի մտածել, թե վորտեղ կանգնեմ, վոր ավելի լավ լինի: Հետևումս, յերեք քայլ հեռու, կար մի մեծ սոճի: «Արի, կանգնեմ սոճու մոտ և մյուս հրացանս նրան հենեմ»: Գնացի դեպի սոճին և մինչև ծնկներիցս վեր խրվեցի: սոճու մոտ արջին ու կես տեղ հարթեցի և նրա վրա տեղավորվեցի: Մեկ հրացանը վերցրի ձեռս, իսկ մյուսը բարձրացրած հրահաններով հենեցի սոճուն: Դաշույնս հանեցի և նորից դրի պատյանը, վոր իմանամ, թե հարկավոր դեպքում հեշտ կհանվի:

Նոր եյի տեղավորվել, մեկ ել լսում եմ անտառում, Դեմյանն ե գոչում. «Հապա սկսենք, դեհ, սկսում ենք»: Ու հենց վոր Դեմյանը գոչեց, շրջագծում կանգնած գյուղացիներն ել սկսեցին զանազան ձայներով գոչել. «սկսում ենք առաջ, ու, ու, ու», կանայք ել բարակ ձայնով գոչում ելին. «հայ, հոյ, հեյ»:

Արջը շրջապատված եր: Դեմյանը նրան քշում եր: Շուրջն՝ ամենուրեք աղմկում ելին մարդիկ. միայն յես ու ընկերս լուռ կանգնել ելինք, չեյինք շարժվում և սպասում ելինք արջին: Կանգնած նայում եմ ու ալանջ զնում:

սիրտս ել խփում ե: Հրացանս բռնած դողում եմ: Ահա, մտածում եմ՝ հիմա դուրս կգա. նշան կբռնեմ, կկրակեմ, վայր կընկնի... Հանկարծ ձախ կողմից լսում եմ ձյան մեջ մի բան թավալվողը և լինում, բայց հեռու յե: Նայեցի բարձր յեղենուտը. ծառերի հետեւ հիստեն քայլի վրա կանգնած ե ինչ-վոր անագին սև բան: Նշան բռնեցի և սպասում եմ: Մտածում եմ՝ ավելի մոտ չի գա արդյոք: Տեսնեմ ականջները շարժեց, շուռ յեկավ ու դեպի հետ գնաց: Կողքից ամբողջովին եր յերևում: Ի՞նչ հսկայական գաղան ե: Յես տաքացած նշան բռնեցի: Թրանխկ, լսում եմ գնդակա շրմփած ծառին: Ծխի միջից նայում եմ՝ իմ արջը շրջան տվեց ու չքացավ անտառի հետևում: «Ե՛, մտածում եմ, բանս բուրդ ե, ել իմ կողմը չի գա. կամ ընկերս կխփի, կամ գյուղացիների կողմը կգնա, բայց դեպի ինձ ել չի գա»: Կանգնել եմ, նորից հրացանս լցրի ու ականջ եմ դնում, ամեն կողմից գյուղացիներն աղմկում են, բայց աջ կողմում, ընկերոջիցս վոչ հեռու լսում եմ — մի գեղջկուհի՝ անսովոր ձայնով գոչում ե. «Հրեն», այստեղ, այստեղ ե, այստեղ ե նա. ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ, ա՛յ»



Պարզ ե, վոր տեսել ե արջին: Յես այլևս արջին իմ կողմը չեմ սպասում և նայում եմ դեպի աջ՝ ընկերոջս վրա: Տեսնեմ Դեմյանը մի փայտ ձեռին, առանց դահուկների, արահետով վազում ե դեպի ընկերս: Նստել ե նրա մոտ և փայտով մի բան ե ցույց տալիս նրան, կարծես նշան ե բռնում: Տեսնեմ ընկերս վերցրեց հրացանն ու Դեմյանի ցույց տված կողմն ե նշան բռնում: Թրանխկ, կրակեց: «Ե՛, մտածում եմ, սպանեց»: Բայց տեսնում եմ, ընկերս արջի հետևից չի վազում: «Յերևի, վրիպել ե կամ վատ ե խփել, այժմ արջը հետ կփախչի և այլևս դեպի ինձ չի գա», մտածում եմ յես: Այս ինչ ե: Հանկարծ տեսնում եմ, վոր առջևիցս մորկի նման մի բան ե թռչում փնչալով, շատ մոտիկից ձյունն ե թափթփվում: Առջևս նայեցի՝ տեսնեմ նա խիտ յեղենուտի արահետով ուղղակի ինձ վրա յե սլանում կատաղությամբ և յերևում ե, վոր վախից ինքն իրեն կորցրել ե:

Մոտ հինգ քայլի վրա տեսնում եմ նրա սև կուրծքն ու շիկակամիթ հսկայական գլուխը: Ուղղակի ինձ վրա յե վազում, ճակատը դեմ արած ու ձյունն ամեն կողմ ցրել տալիս: Արջի աչքերից յերևում ե, վոր նա ինձ չի նկատում, այլ յերկյուղից սլանում ե, վորքան ուժ ունի, ինքն ել չգիտե՝ ուր: Նրա ճանապարհը միայն դեպի սոճին ե, վորի մոտ կանգնել եյի յես: Հրացանս վերցրի, կրակեցի, իսկ արջն արդեն ավելի յեր մոտենում: Տեսնում եմ՝ չդիպավ, գնդակը կողքից անցավ, բայց նա չի լսում, վազում ե դեպի ինձ ու ելի չի տեսնում: Հրացանս ուղղեցի նրան, համարյա դեմ արի գլխին: Թռանխկ, տեսնեմ, խփեցի, բայց չսպանեցի:

Արջը գլուխը բարձրացրեց, ականջները սեղմեց, ատամները բաց արավ և ուլիղ դեպի ինձ վազեց: Ձեռքս մյուս հրացանիս մեկնեցի, բայց հենց նոր եյի ձեռս առել, նա հարձակվեց վրաս, վայր գցեց ինձ ձյան մեջ ու վրայիցս դեն ցատկեց: «Ե՛, մտածում եմ, լավ ե, վոր թողեց ինձ»:

Ուզում եմ վեր կենալ, բայց զգում եմ, վոր մի բան ինձ ճնշում ե, բաց չի թող նում: Նա հարձակվելիս իր ուժեղ թափից չի կարողացել ինձ վրա ընկնել, այլ դեն ե ցատկել՝ հետ դարձել ու ամբողջ կրծքով վրաս ընկել: Զգում եմ, վոր մի ծանր բան ընկած ե վրաս, զգում եմ յերեսիս մի տաք բան, զգում եմ, վոր ամբողջ դեմքս իր յերախն ե առնում: Գիթս արդեն նրա բերանումն ե. զգում եմ, վոր տաք ե և արյան հոտ ե գալիս նրանից: Նա թաթերով տրորում ե ուսերս ու յես չեմ կարող շարժվել: Միայն գլուխս կրծքիս թեքելով քիթս ու աչքերս հանում եմ նրա բերանից: Իսկ նա աշխատում ե հենց քիթիցս ու աչքերիցս բռնել: Զգում եմ, վոր վերին ծնոտի ատամներով բռնել ե ճակատիցս մազերիս տակից, իսկ ստորին ծնոտով՝ աչքերիս տակից ատամներն իրար բերելով սեղմել ե: Սկսում ե. կարծես դանակով կտրում են գլուխս, կոտում եմ, աշխատում եմ ձեռքիցը պոկ գալ, բայց նա շտապելով շան նման կրծոտում, համ համ ե անում: Յես պոկ եմ գալիս ձեռքիցը, նա նորից ե բռնում: «Ե՛հ, մտածում եմ, վերջս հասել ե»: Մեկ ել զգում եմ — թեթևացա: Նայում եմ՝ արջը չկա, թողել ե ինձ ու փախել:

Յերբ ընկերս ու Դեմյանը տեսել են, վոր արջը ձյան մեջ ե կոխել ինձ ու կրծոտում ե, վազել են դեպի ինձ: Ընկերս ուզել ե շուտ հասնել, բայց սխալվել ե. փոխանակ տափած ճանապարհով վազելու, վազել ե ձյան միջով ու ընկել ե: Մինչև նա դուրս եր գալիս ձյան միջից, արջը շարունակ կրծոտել ե ինձ: Իսկ Դեմյանն առանց հրացանի լինելով, ձեռքին ցախի մի կտոր բռնած վազում ե արահետով և գոռում ե «արջն աղային պատառոտեց, աղային պատառոտեց»: Վազում ու գոռում ե արջի վրա, «Ախ դու, փուչ կենդանի, մի տես, ինչ ե անում. թո՛ղ, թո՛ղ»:

Արջը լսել ե, թողել ե ինձ ու փախել: Յերբ յես վեր կացա, ձյան վրա այնքան արյուն կար, վոր կարծես վոչխար եյին մորթել, և աչքերիս վրա փալասի նման միտս եր կախվել, բայց կովի ժամանակ ցավ չեմ զգացել:

Վրա վազեց ընկերս, մարդիկ հավաքվեցին, նայում են վերքս, ձյունով են հովացնում: Իսկ յես վերքի մասին մոռացած, հարցնում եմ. «Ո՛ւր ե արջը, ո՛ւր գնաց»:

Հանկարծ լսում ենք. «Ահա արջը, ահա նա»: Տեսնենք արջը դարձյալ դեպի մեզ ե վազում: Վերցրինք հրացաններս, բայց մինչև մեր կրակելը, նա արդեն փախավ գնաց: Արջը կատաղել եր — ուզում եր ելի գգել, բայց տեսավ, վոր շատ մարդ կա, վախեցավ: Հեաքից տեսանք, վոր արջի գլխից արյուն ե

գալիս, ուզեցինք գնալ հասնել հետևից, բայց զլուխս սկսեց ցավել, և մենք
գնացինք քաղաք բժշկի մոտ:

Բժիշկը մետաքսի թելով վերքերս կարեց, ու նրանք սկսեցին լավանալ:
Մի ամսից հետո մենք նորից գնացինք այդ արշին վորսալու, բայց ինձ
չհաջողվեց նրան վերջնականապես սպանել: Արշը շրջապատված տեղից
դուրս չեմ գալիս, այլ շարունակ պտտում եմ այստեղ և սարսափելի ձայնով
գոռում: Դեմյանն սպանեց նրան: Իմ գնդակից ջարդվել եմ արջի ստորին
ծնոտը և ռտամը:

Այս արջը շատ մեծ եմ և հրաշալի սև մորթի ունեմ: Յես այդ մորթուց
խրտվիլակ շինեցի, վորը գտնվում ե իմ սենյակում: Ճակատիս վերքերը լա-
վացան, այնպես վոր հագիվ եմ յերևում նրանց տեղերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բուրկա	3
Բուրկան և վաշազը	4
Ֆասյաններ	5
Միլտոնն ու Բուրկան	6
Կրիա	7
Բուրկան և դայլը	8
Ինչ պատահեց Բուրկայի հետ Պյատիգորսկում	10
Բուրկայի և Միլտոնի վախճանը	11
Գորշ նապաստակը	12
Նապաստակները	13
Հրդեհի շներ.	14
Կատվի ձագը	16
Արծիվը	17
Ճնճղուկն ու ծիծեռնակները (ըստ Պերեկուսկու)	18
Առյուծն ու շնիկը (անգլիկներին)	19
Ինչպես եմ սովորեցնում գայլերն իրենց ձագերին	20
Շնաձուկը	20
Վոսալուն	22
Վորսորդի պատմածը	24



Редактор *П. Чатынъян.*

Тех. редактор *Л. Жданович.*

Издание № 2,28. Сдано в набор 15 декабря 1937 г., подписано в печать
15 января 1938 г. Формат 82x108/16. Объем 4 п. л. Тираж 4500.

Уполоблит № С—15. Типография Областного армянского издательства
„Большевик“, Ростов-Дон, Ворошиловский пр. 27. Заказ № 2412.

ՀՀ Ազգային գրադարան



NL0391481

ՀԻՆԸ 60 ՀՈՊԻԿ
ЦЕНА 60 КОП.

223

5440

027964

Л. Толстой

Рассказы о животных

(На армянском языке)

РОСТОВСКОЕ ОБЛАСТНОЕ
АРМЯНСКОЕ ИЗДАТЕЛЬСТВО
„БОЛЬШЕВИК“

Ростов-Д., Ворошиловский пр., 27